# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձաբար պաշտպանության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Տաջիկստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

գիտակցելով, որ ներդրումների խրախուսումը և փոխադարձ պաշտպանությունը կնպաստեն փոխշահավետ առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության զարգացմանը երկու Պայմանավորվող կողմերի միջև, ինչպես նաև կբազմապատկեն երկու պետությունների բարեկեցությունը,

ցանկանալով ստեղծել բարենպաստ պայմաններ մի Պայմանավորվող կողմի ներդրողների համար մյուս Պայմանավորվող կողմի տարածքում,

ապահովելով Պայմանավորվող կողմերի ներդրումային գործունեության սուբյեկտների իրավունքների, շահերի և գույքի հավասար պաշտպանությունը,

հիմնվելով հավասարության, փոխադարձ հարգանքի, ինքնուրույնության և փոխշահավետության սկզբունքների վրա,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1
### Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար հետևյալ տերմինները նշանակում են.

1. «Ներդրող» տերմինը նշանակում է Պ այմանավորվող կողմերից յուրաքանչյուրի համար.

ա/ ցանկացած ֆիզիկական անձ, որը հանդիսանում է նշված Պայմանավորվող կողմի պետության քաղաքացի կամ մշտապես բնակվում է Պայմանավորվող կողմի տարածքում և իրավասու է դրա օրենսդրությանը համապատասխան ներդրումներ կատարել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում,

բ/ ցանկացած իրավաբանական անձ կամ այլ ձեռնարկություն, որը ստեղծվել կամ հիմնվել է Պայմանավորվող կողմերից մեկի օրենսդրությանը համապատասխան, ունի գտնվելու վայր Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում և ճանաչված է վերջինիս օրենսդրությամբ:

2. «Ներդրումներ» տերմինը ընդգրկում է գույքային և մտավոր արժեքների բոլոր տեսակները, որոնք տնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով ներդրվում կամ վերաներդրվում են մի Պայմանավորվող կողմի ներդրողի կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, մասնավորապես, բայց ոչ բացառապես.

ա) դրամական միջոցները, բանկային նպատակային ավանդները, բաժնետոմսերը, բաժնեմասերը, պարտքային պարտավորությունները և այլ արժեթղթերը,

բ) շարժական և անշարժ գույքը (շենքերը, շինությունները, սարքավորումները և այլ նյութական արժեքները) և դրանց հետ կապված գույքային իրավունքները, ներառյալ գրավի, վարձակալության և հիպոթեքի իրավունքը,

գ) դրամական պահանջները և պահանջի իրավունքը տնտեսական արժեք ունեցող ցանկացած գործունեության նկատմամբ, պայմանագրային պարտավորությունները,

դ) մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքները (հեղինակային իրավունքները, գյուտերի, արտոնագրերի, արդյունաբերական նմուշների և նախագծերի, առևտրային նշանների, ֆիրմային անվանումների, ծագման ցուցիչների, տեխնոլոգիաների, նոու-հաու-ի և այլնի նկատմամբ իրավունքները),

ե) օրենքի կամ պայմանագրի հիման վրա տրամադրվող կոնցեսիաները, ներառյալ մասնավորապես բնական պաշարների հետախուզման, արդյունահանման և շահագործման նկատմամբ իրավունքները:

Սույն Համաձայնագրի շրջանակներում գույքային արժեքների ներդրման կամ վերաներդրման ձևի իրավաբանական փոփոխությունը չի ազդի որպես ներդրումներ դրանց բնույթի վրա:

3. «Եկամուտներ» տերմինը նշանակում է ներդրումների արդյունքում որպես շահույթ ստացված գումարները և մասնավորապես, բայց ոչ բացառապես ներառում է՝ շահույթը, շահաբաժինը, տոկոսավճարները, հոնորարները, կապիտալի աճը, ռոյալթին, լիցենզիոն և կոմիսիոն վճարները:

4. «Տարածք» տերմինը նշանակում է՝

ա) Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքը,

բ) Տաջիկիստանի Հանրապետության նկատմամբ՝ Տաջիկիստանի Հանրապետության տարածքը:

## Հոդված 2
## Ներդրումների խրախուսումը և պաշտպանությունը

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կխրախուսի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին՝ իր տարածքում ներդրումներ կատարելու և կթույլատրի այդպիսի ներդրումները իր օրենսդրությանը համապատասխան:

2. Ներդրումները, այնպես, ինչպես դրանք սահմանված են 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն, և դրանց հետ կապված եկամուտները կօգտվեն լիակատար պաշտպանությունից սույն Համաձայնագրին համապատասխան: Նույնը, առանց սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին վնաս հասցնելու, վերաբերում է նաև այդպիսի եկամուտների վերաներդրման դեպքում ստացված բոլոր եկամուտներին: Ներդրումների՝ օրենքի շրջանակներում կատարված ընդլայնումը, փոփոխումը կամ ձևափոխումը կդիտվեն որպես նոր ներդրումներ:

## Հոդված 3
## Ներդրումների ազգային ռեժիմ

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը իր տարածքում պարտավորվում է ապահովել մյուս Պայմանավորվող Կողմի ներդրողների ներդրումների և ներդրումների հետ կապված գործունեության նկատմամբ արդար և իրավահավասար ռեժիմ, որը բացառում է խտրական բնույթի այնպիսի միջոցների կիրառումը, որոնք կարող են խոչընդոտել ներդրումների կառավարմանը և տնօրինմանը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ռեժիմը կլինի ոչ պակաս բարենպաստ, քան այն ռեժիմը, որը տրամադրվում է սեփական ներդրողներին կամ ցանկացած երրորդ պետության ներդրողներին և այդպիսի ներդրումների հետ կապված գործողություններին:

3. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում այն արտոնությունների և առավելությունների վրա, որոնք Պայմանավորվող կողմը տրամադրում է կամ ապագայում կտրամադրի ցանկացած երրորդ պետության ներդրողներին կամ նրանց ներդրումներին կապված՝

ա) ազատ առևտրի գոտուն, մաքսային կամ տնտեսական միությանը, տնտեսական փոխօգնության կազմակերպությանը կամ այնպիսի միջազգային համաձայնագրին անդամակցության հետ, որը նախատեսում է այնպիսի արտոնություններ և առավելություններ, ինչպիսիք Պայմանավորվող կողմը տրամադրում է նշված կազմակերպությունների մասնակիցներին,

բ) կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայանգրի կամ հարկման հարցերով այլ պայմանավորվածության հետ:

## Հոդված 4
## Ներդրումների օտարումը և վնասների փոխհատուցումը

1. Պայմանավորվող Կողմերից մեկի ներդրողների՝ մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում կատարած ներդրումները չեն օտարվի, ազգայնացվի կամ ենթարկվի հետևանքներով օտարմանը հավասար միջոցառումների (այսուհետ՝ օտարում), բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի միջոցառումները ձեռնարկվում են ելնելով հասարակական և պետական շահերից և իրականացվում են օրենսդրությամբ սահմանված կարգով, և ուղեկցվում են նախնական և համարժեք փոխհատուցան վճարմամբ:

2. Փոխհատուցումը պետք է համապատասխանի օտարվող ներդրումների իրական շուկայական արժեքին՝ մինչև այն պահը, երբ պաշտոնապես հայտնի է դարձել օտարման փաստացի իրականացման մասին կամ պատրաստվող օտարման մասին: Փոխհատուցումը պետք է վճարվի առանց անհիմն ուշացման ազատ փոխարկելի տարադրամով և ազատ փոխանցվում է մի Պայմանավորվող կողմի տարածքից մյուս Պայմանավորվող կողմի տարածք: Մինչև լրիվ վճարումը փոխհատուցման գումարին կհաշվարկվեն տոկոսներ՝ համաձայն այն Պայմանավորվող կողմի տոկոսադրույքի, որի տարածքում կատարվել են ներդրումները:

3. Մի Պայմանավորվող կողմի ներդրողներին, որոնց ներդրումներին վնաս է հասցվել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում՝ պատերազմի կամ այլ զինված ընդհարման, արտակարգ իրավիճակների, քաղաքացիական անկարգությունների, պետական հեղաշրջման. ապստամբության կամ այլ նման իրադարձության հետևանքով, վերջին Պայմանավորվող կողմի տարածքում կտրամադրվի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը վերջին Պայմանավորվող կողմը տրամադրում է սեփական ներդրողներին կամ ցանկացած երրորդ պետության ներդրողներին, բացառությամբ տարերային աղետների, հրդեհների, վթարների, համաճարակների դեպքերի և այլ արտակարգ բնույթ ունեցող հանգամանքների:

## Հոդված 5
## Ներդրումների հետ կապված վճարումների փոխանցումներ

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կերաշխավորի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին՝ նրանց կողմից բոլոր հարկային և պարտադիր վճարումների այլ տեսակների կատարումից հետո, ներդրումների հետ կապված վճարումների անարգել փոխանցում արտասահման, և մասնավորապես, բայց ոչ բացառապես՝

ա/ սկզբնական ներդրման գումարների և ներդրումների պահպանման և մեծացման համար լրացուցիչ գումարների,

բ/ ներդրումներից ստացված շահույթի,

գ/ պայմանագրերով նախատեսված վճարումների իրականացման համար անհրաժեշտ գումարների, ներառյալ ռոյալթիի, արտոնագրերի, ֆրանչայզինգի հետ կապված վճարումների և պարտքերի մարման և այլ նմանատիպ իրավունքների հետ կապված վճարումների,

դ/ ներդրումների լրիվ կամ մասնակի օտարման կամ վաճառքի կապակցությամբ ներդրողի ստացած գումարների, ներառյալ՝ ներդրված ներդրումների աճը,

ե/ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածով նախատեսված փոխհատուցումների,

զ/ Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացիների՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ներդրումների հետ կապված աշխատանք կատարելու համար ստացված աշխատավարձերի և այլ վարձատրության,

է/ վեճերի կարգավորման արդյունքում վճարված գումարների:

2. Վճարումների փոխանցումները կիրականացվեն առանց անհիմն ուշացումների, ազատ փոխարկելի տարադրամով և փոխանցման օրը գործող փոխարժեքով:

«Առանց անհիմն ուշացումների» փոխանցում կհամարվի փոխանցման հետ կապված ձևական գործողությունների կատարման համար պահանջվող օպտիմալ ժամանակահատվածում կատարված փոխանցումը:

## Հոդված 6
## Սուբրոգացիա

1. Պայմանավորվող կողմը կամ նրա կողմից լիազորված մարմինը, որոնք կիրականացնեն վճարում ցանկացած ներդրողի մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կատարված ներդրումների կապակցությամբ կնքված երաշխավորման կամ ապահովագրման շրջանակներում, կարող են սուբրոգացիայի կարգով իրականացնել ներդրողի իրավունքները՝ նույն ծավալով, ինչ-որ ներդրողը:

2. Պայմանավորվող կողմը մյուս Պայմանավորվող կողմի պետության ներդրողի հետ վեճի կողմ հանդիսանալով՝ վեճի կարգավորման կամ դրա կապակցությամբ կայացված որոշման կատարման ամբողջ ընթացքում, չպետք է որպես պաշտպանություն փաստարկի իր անձեռնմխելիությունը կամ այն հանգամանքը, որ ներդրողը ըստ ապահովագրական կոնտրակտի, որը չի նախատեսում վերջին Պայմանավորվող կողմին կամ նրա կողմից լիազորված կառույցներին երաշխիքների տրամադրում, ստացել է հատուցում և այն ծածկում է կրած վնասների կամ կորուստների ամբողջ ծավալը կամ դրա մի մասը:

## Հոդված 7
## Պայմանավորվող կողմի և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջև ներդրումային վեճերի լուծումը

1. Պայմանավորվող կողմերից մեկի և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջև ներդրումների կապակցությամբ ծագած ցանկացած վեճ կլինի գրավոր ծանուցման առարկա, որն ուղեկցվում է նախաձեռնող կողմի մանրամասն մեկնաբանություններով:

2. Եթե գրավոր ծանուցման օրվանից երեք ամսվա ընթացքում հաշտության կամ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով հնարավոր չի լինի կարգավորել վեճը, ապա ներդրողի հայեցողությամբ վեճը կփոխանցվի այն Պայմանավորվող կողմի իրավասու դատարանի կամ

արբիտրաժի քննարկմանը, որի տարածքում կատարվել են ներդրումները կամ էլ՝ միջազգային արբիտրաժային դատարանի քննարկմանը:

Վերջին դեպքում Պայմանավորվող կողմերը նախապես համաձանում են սույն կետ առաջին պարբերությունում հիշատակված վեճը անվեհապահորեն փոխանցել միջազգային արբիտրաժ սույն հոդվածին համապատասխան: Այսպիսի համաձայնությունը ենթադրում է, որ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը հրաժարվում է պահանջել, որ սպառվեն վեճի կարգավորման բոլոր ներքին վարչական կամ իրավաբանական միջոցները:

3. Միջազգային արբիտաժային դատարանում վեճը քննելիս այն փոխանցվում է «ad hoc» արբիտրաժային դատարանի քննմանը՝ Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի արբիտաժային կանոնակարգին համապատասխան:

4. Վեճին մասնակցող Պայմանավորվող կողմերը արբիտրաժային վարույթի կամ արբիտրաժային որոշման կատարման ցանկացած փուլում պարտավորվում են չվիճարկել այն հանգամանքը, որ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողը սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածով նախատեսված որևէ ապահովագրական պոլիսին կամ այլ երաշխիքին համապատասխան ստացել է լրիվ կամ մասնակի փոխհատուցում:

5. Արբիտրաժային դատարանը որոշում է կայացնում՝ ղեկավարվելով ներդրումներ ընդունող Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, ներառյալ կոլիզիոն իրավունքի կանոնները, ինչպես նաև սույն Համաձայնագրի դրույթներով, ներդրումների կապակցությամբ գործող հատուկ համաձայնագրերով և միջազգային իրավունքի սկզբունքներով:

6. Արբիտրաժային որոշումը կլինի վերջնական և պարտադիր վեճի երկու կողմերի համար: Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է այդ որոշումը ի կատար ածել իր օրենսդրությանը համապատասխան:

## Հոդված 8
## Պայմանավորվող Կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման կապակցությամբ վեճերի կարգավորումը

1. Պայմանավորվող Կողմերը պետք է ձգտեն բարի կամքով և համագործակցության ոգով հասնել փոխադարձ ներդրումներին վերաբերող ցանկացած հարցի արագ և արդար լուծմանը:

2. Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված Պայմանավորվող Կողմերի միջև վեճերը հնարավորության սահմաններում կլուծվեն դիվանագիտական ուղիներով:

3. Եթե այդ ձևով վեճը չկարգավորվի վեճի մասին ծանուցելու պահից երեք ամսվա ընթացքում, ապա Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով այն կփոխանցվի արբիտրաժային (միջնորդ) դատարանի քննությանը, որը կստեղծվի սույն հոդվածի համաձայն:

4. Այդպիսի արբիտրաժային դատարան կստեղծվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար հետևյալ ձևով: Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը արբիտրաժային վարույթի մասին ծանուցում ստանալու օրվանից քառասուն օրվա ընթացքում կնշանակի մեկ արբիտր: Հետո այդ երկու արբիտրերը ընտրում են երկու Պայմանավորվող կողմերի հետ դիվանագիտական հարաբերություններ ունեցող երրորդ պետության քաղաքացու, որը երկու Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ երկու արբիտրերից վերջինի նշանակման օրվանից քառասուն օրվա ընթացքում կնշանակվի դատարանի նախագահ:

5. Եթե սույն հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետներում, անհրաժեշտ նշանակումները չկատարվեն, ապա այլ պայմանավորվածության

բացակայության դեպքում Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել ՄԱԿ-ի Միջազգային դատարանի նախագահին՝ անհրաժեշտ նշանակումներ կատարելու խնդրանքով: Եթե Միջազգային դատարանի նախագահը հանդիսանում է Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացի կամ այնպիսի պետության քաղաքացի, որի հետ Պայմանավորվող կողմերից մեկը չունի դիվանագիտական հարաբերություններ կամ որևէ այլ պատճառով չի կարող կատարել նշված գործառույթը, ապա անհրաժեշտ նշանակումների կատարումը կառաջարկվի Միջազգային դատարանի փոխնախագահին: Եթե Միջազգային դատարանի փոխնախագահը նույնպես հանդիսանում Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացի կամ, եթե որևէ այլ պատճառով չի կարող կատարել նշված գործառույթը, ապա անհրաժեշտ նշանակումների կատարումը կառաջրկվի Միջազգային դատարանի ըստ ավագության նրան հաջորդող անդամին, որը չի հանդիսանում որևէ Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացի:

6. Միջնորդ դատարանը ինքնուրույն է սահմանում իր աշխատակարգը: Դատարանը իր որոշումներն ընդունում է ձայների մեծամասնությամբ: Նման որոշումը կլինի վերջնական և պարտադիր երկու Պայմանավորվող կողմերի համար: Դատարանը որոշումները կայացնում է սույն Համաձայնագրի դրույթներին և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին համապատասխան: Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կկրի իր կողմից նշանակված արբիտրի գործունեության և միջնորդ վարութում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը. դատարանի նախագահի գործունեության հետ կապված ծախսերը, ինչպես նաև այլ ծախսերը Պայմանավորվող կողմերը կկրեն հավասար չափով: Դատարանը, սակայն, կարող է, նախատեսել իր որոշման մեջ, որ Պայմանավորվող կողմերից մեկը կկրի ծախսերի մեծ մասը, և այդպիսի որոշումը պարտադիր կլինի երկու Պայմանավորվող կողմերի համար:

## Հոդված 9
## Այլ կանոնների կիրառումը և հատուկ պարտավորություններ

1. Եթե Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության դրույթները կամ միջազգային իրավունքին համապատասխան ստանձնած պարտավորությունները, որոնք առկա են կամ կսահմանվեն ապագայում, ի լրումն սույն Համաձայնագրի Պայմանավորվող կողմերի միջև, պարունակում են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ կանոններ, որոնք մյուս Պայմանավորվող կողմի ներդրումներին և ներդրողներին ավելի բարենպաստ ռեժիմից օգտվելու իրավունք են տալիս, քան նախատեսվում է սույն Համաձայնագրով, ապա այդ կանոնները կգերակայեն սույն Համաձայնագրի նկատմամբ, այնքանով, որքանով դրանք ավելի բարենպաստ են:

2. Մի Պայմանավորվող կողմի և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի (ներդրողների) միջև ստորագրված հատուկ համաձայնագրերին համապատասխան իրականացված ներդրումները կկարգավորվեն սույն Համաձայնագրի և այդ հատուկ համաձայնագրի դրույթներով:

## Հոդված 10
## Խորհրդակցություններ

1. Երկու Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչները ըստ անհրաժեշտության հանդիպումներ կանցկացնեն հետևյալ նպատակներով.

ա) սույն Համաձայնագրի կիրառման հարցերի ուսումնասիրում,

բ) ներդրումների իրավական հարցերով և դրանց իրականացման հնարավորությունների մասին տեղեկատվության փոխանակում,

գ) ներդրումների կապակցությամբ ծագող վեճերի կարգավորում,

դ) ներդրումների հետ կապված այլ հարցերի ուսումնասիրում,

ե) սույն Համաձայնագրի մեջ հնարավոր փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունների քննարկում:

2. Եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը առաջարկի խորհրդակցություններ անցկացնել սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված ցանկացած հարցով, ապա մյուս Պայմանավորվող կողմը ամիջապես կպատասխանի, և խորհրդակցությունները հաջորդաբար կանցկացվեն Երևանում և Դուշանբեում:

## Հոդված 11
## Համաձայնագրի կիրառումը

1. Սույն Համաձայնագիրը կկիրառվեն առանց բացառության բոլոր այն ներդրումներին, որոնք իրականացվել են մի Պայմանավորվող Կողմի ներդրողների կողմից մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում, ինչպես մինչև սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, այնպես էլ դրանից հետո վերջինիս ներդրումներ կատարելու օրենքներին և կանոններին համապատասխան:

2. Սույն Համաձայնագիրը ուժ չունի այն ներդրումային վեճերի նկատմամբ, որոնք ծագել կամ կարգավորվել են մինչև սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը:

## Հոդված 12
## Փոփոխություններ և լրացումներ

Պայմանավորվող կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ կամ լրացումներ: Փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածով նախատեսված կարգով:

## Հոդված 13
## Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, գործողության ժամկետը և դադարեցումը

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը գրավոր կծանուցի մյուս Պայմանավորվող կողմին սույն Համաձայնգիրն ուժի մեջ մտցնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ծանուցումներից վերջինի ստացման օրվանից:

2. Սույն Համաձայնագիրը կգործի տաս տարվա ընթացքում: Եթե այդ ժամկետը լրանալուց վեց (6) ամիս առաջ Պայմանավորվող կողմերից ոչ մեկը գրավոր չծանուցի այն մյուս Պայմանավորվող կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին, ապա այն յուրաքանչյուր անգամ կերկարաձգվի տաս (10) տարով:

3. Մինչև սույն Համաձայանգրի գործողության դադարեցման ժամկետը իրականացված և Համաձայնագրի գործողության տակ ընկնող ներդրումների նկատմամբ սույն Համաձայնագրի բոլոր դրույթները ուժի մեջ կմնան սույն Համաձայնագրի գործողության դադարեցման ժամկետից հաշված հաջորդ տաս (10) տարվա ընթացքում:

Ի վկայություն վերը նշվածի, համապատասխան կառավարությունների ներքոհիշյալ լիազորված ներկայացուցիչները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Դուշանբե քաղաքում 2002 թվականի ապրիլի 3-ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն, տաջկերեն և ռուսերեն: Սույն Համաձայնագրի դրույթների տարբեր մեկնաբանման ժամանակ որպես հիմք կընդունվի ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2002 թվականի նոյեմբերի 18-ից: